

Գ Լ ՈՒ Խ Բ .

Պոսքովիկայի արեւելեան Հայոց կրօնական յատկոթիւններն ու սովորոթիւնները :

Յայտնի է թէ արեւելեան Հայք Եւտիքէսի հետեւող կը համարուին, եւ թէ քրիստոսի երկու բնութեանց՝ աստուածային եւ մարդկային բնութեանց չեն հաւատար, եւ թէ կը մերժեն քաղկեդոնի (4^ր ընդհանուր) ժողովը, որ քրիստոսի երկու բնութիւն ունենալուն վարդապետութիւնը հաստատեց¹ :

Քաղկեդոնի ժողովը մերժելուն պատճառն այն է, որ այս ժողովոյն մէջ հաստատուած վարդապետութիւնը չհասկցան. որուն պատճառն էր հայերէնի աղքատութիւնը նկատմամբ յունարէն լեզուին: Այսպէս Հայերը չունէին հետեւեալ յունարէն բառերու համապատասխանող բառեր² այս է՝ $\varphi\acute{o}\sigma\iota\varsigma$ = բնութիւն, $\sigma\theta\delta\iota\alpha$ = գոյացութիւն եւ $\acute{\upsilon}\pi\acute{o}\sigma\tau\alpha\sigma\iota\varsigma$ = անձն. այնպէս որ երբ Յոյնք կ'ըսէին՝ Յիսուս ունի երկու $\varphi\acute{o}\sigma\iota\varsigma$ (բնութիւն), Հայք կը կարծէին թէ կ'ըսուի՝ երկու $\acute{\upsilon}\pi\acute{o}\sigma\tau\alpha\sigma\iota\varsigma$ (անձն), եւ անոր համար կ'ըսէին թէ քրիստոս մի միակ անձն է:

Սակայն այսօրս արեւելեան հայ եկեղեցին քրիստոսի երկու բնութեանց վարդապետութիւնը կը դաւանի, որ կ'երեւայ քրիստոսի կողմ